քաղաքներում փալաս հավաքել տա և ուղարկի Էջմիածին։

Բաթանի հավաքման գործի մասին Սիմեոն կաթողիկոսի հիշատակարանում կարդում ենք.—

«Գրեաց (Հովսեփ վարդապետին) և զորպեսութիւնս թղթատանն և երեք թապաղա յղեաց ի տնսանել։ Եւ վասն հին քեաթանի գրեաց զպատուէր՝ զի թէ հնար է, և կարէ, զհին քեաթան տացէ ժողովել և աստ յղել (1776 թվի հոկտ. 27-ի նամակից, էջ 512)։

«Եւ պատուէր (Կարսեցի պարոն Գեորգին)՝ զի վասն թղթաշինութեան նիւթոյն հին քեաթան ևս հոգացեալ յղեսցէ» (1775 թ. մայիսի 22-ի նամակից. էջ 403)։ «Եւ վասն յղեալ հին քեաթանին մեղադրութիւն գրեաց սմա (Կարինի առաջնորդ Հարութիւն վարդապետին) զի սորա առեալ հեսապովն թղթի մեկ դաստայն երկու ղուռուշից աւելի նստեր ի մեր վերայ... Թուղթ ևս մեղադրութեան առ ս. Աթոռոյս գործակալ տեր Մանուելն (Կարին) գրեաց, զի յառաջագոյն գրեաց սմա և առաջնորդին, եթէ անպետ քեաթան գտանիցի որոց հօխայն երկու և երեք փարայով տացէն, առեք. իսկ նոքա հիսուն երեք փարայով էին առեալ հօխայն... նոցա տուեալ գինն հեսապ արարաք, որ թող զխարճն և զջաֆայն ի մեկ հօխայեն երեք դաստա թուղթ ելաներ և դաստան կես ղուռուշ նստեր (1775 թ. հուլիսին. նույն տեղ էջ 464)։

Թղթատան ծախսերի մատյանում արձանագրված է «Փալաս քսան թիլանի՝ ի Բայազիդու յղեաց թերզի Կիւրեղն քիրայն ետու երեք ղուռուշ. իսկ 27 թիլանի ի յԵրզրումու յղաց, քիրայն ետու չորս ղուրուշ»։ Վերջին երկու գրանցումները հետաքրքիր են նաև թղթի մոտավոր արժեքը և փոխադրությունների վարձաչափը պարզելու տեսակետից։

Բացի քաթանից գործածվել է նաև բամբակ, կանեփ և կտավհատի ցողուն, այս նյութերի վերաբերյալ թղթագործարանի ծախսերի մատյանում կան հետևյալ գրանցումները.

«Նոր աշակերտ Նիկողայոսին և Մարգարին բաշխիշ ետու չորս հաղար դիան, որ նոր բամբակէ թուղթ իւրանց ձեռօքն հանեալ բերին ընծայ սրբազանին»։ «Կանաչ կտաւահատ առաք ի յԱլիքոչակ. վասն թուղթ շինելոյ. գին ետու հաղար դիան». կամ՝ «կտաւահատի ցողն հանող հիսուն և չորս մշակացն վարձ ետու հիսուն և չորս շահի»։ «Կանեփ առի 36 լիտր, որոց գինն 36 ղուռուշ, կանեփի հունտ 17 լիտր, գինն 10 ղուռուշ... ի Բայազիդու մինչև ցատա, թե սոցա և թէ Գալուստ վարդապետի կանեփին քիրա ետու տասն և հինգ հաղար դիան»։

Որպես օժանդակ նյութ օգտագործվել է՝ ա)կալաքար, բ) թորթոն կամ բրոր, գ) բուրակ, մշակվող նյութերի մաքրման, սպիտակացման և մածուցիկ դարձնելու համար, դ) գեոկտաշ կամ պղնձարջասպ, ե) շիպ, զ) սոսինձ, է) նշաստայ։

Վերոհիշյալ բոլոր նյութերը, բացի սոսինձից ներմուծվել են Տաճկաստանից։ Իսկ սոսինձը պատրաստելու մասին ծախսերի մատյանում կա հետևյալ գրանցումը.«Թուխալ եփել ետուք ձեռամբ ձօրագիւղացի ուստա Աղիրեգին և իւր եղբայր Պետրոսին ի տասն կաշուց արջառաց, որք ութն օր աշխատեցան. իրք վարձ ետու 15 ղուռուշ, որ չորացաւ կշռեցաք եղև եօթն հօխա և կէս». կամ «թուխալ եփել ետու ի պատառոտեալ կաշուց ութն հոխա, վարձն ետու 2 ղուռուշ 31 փարա»։

6. ԳՈՐԾԱՐԱՆԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ԹՂԹԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՌԵԱԼԻԶԱՑԻԱՆ

Գործարանի արտադրական կարողության մասին ուղղակի վկայություններ չկան. այդ իսկ պատճառով, որոշակի ասել, թե այսինչ ժամանակում, այսինքն մի օրում, շաբաթում, կամ ամսում որքան թուղթ է արտադրվել, չենք կարող. հայտնի չէ նաև արտադրական պրոցեսի տևողությունը։ Սակայն ծախսերի մատյանում գտնվող գրանցումներից հնարավոր է վերոհիշյալ հարցերի մասին մոտավոր գաղափար կազմել. ահա այդ գրանցումները. «Ի յօդոստոսի 18. ետու 25 թիլանի փալաս և՝ հինգ թիլանի կանեփ, չորս հոխա թուխալ, երկու հոխա կէս շիպ և